Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ԼՂՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Մայիսի 27-ին՝ Հոգեգալստյան տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հավարտ Սուրբ Պատարագի, տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ընթացքին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց ԼՂՀ «Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ և թեմական առաջնորդներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ԼՂՀ պետական բարձրաստիճան պաշտոնյաներ:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, ապա ներկաներին ողջույնի խոսքով դիմեց Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազան Հայրն անդրադարձավ Արցախի թեմի վերաբացմանը, Վեհափառ Հայրապետի անմիջական ուշադրության ներքո թեմի արձանագրած ձեռքբերումներին քրիստոնեական դաստիարակության, եկեղեցաշինության, ժողովրդի հոգևոր կարիքների բավարարման ոլորտներում: Պարգև Սրբազանն ընդգծեց, որ Վեհափառ Հայրապետն ամենից շատ Արցախ այցելած Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, ով մշտապես գործուն կերպով զորավիգ է եղել արցախահայությանը՝ տարբեր առիթներով հորդորելով աշխարհասփյուռ հայորդներին՝ սատարելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Այնուհետև ընթերցվեց շքանշանի հանձնման հրամանագիրը, ապա ԼՂՀ նախագահը Ամենայն Հայոց Հայրապետին հանձնեց Արցախի «Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանը և շքանշանի վկայականը:

«...Ես վստահ եմ, որ մեր բոլոր հաղթանակներն սկսվել են Սուրբ Էջմիածնից, և առաջին հերթին դրանք մեր հոգևոր հաղթանակներն են: Եթե չլինեին դրանք, երևի մենք չունենայինք մեր մնացյալ հաղթանակները: Մեր հաղթանակների երաշխիքը մեր միասնությունն է և, առաջին հերթին, մեր հոգևոր միասնությունը, որն ստեղծեց բոլոր հնարավորությունները Արցախն ազատագրելու համար: Ես վստահ եմ, որ այն, ինչ որ դուք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է արել Արցախի համար, դեռ սկիզբն է և կունենա շարունակություն: Ես վստահ եմ, որ մենք Ձեզ հետ միասին, Ձեր գլխավորությամբ և աջակցությամբ դեռ բազմաթիվ հաղթանակներ ենք ունենալու: Մեր բոլոր հաղթանակների ժամանակ մենք զգում ենք, որ մեր թիկունքում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և սա մեր հաղթանակների կարևոր երաշխիքներից է»,- նշեց ԼՂՀ նախագահը:

Արարողության ընթացքին շնորհավորական խոսք ասաց նաև ՀՀ ԳԱԱ նախագահ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Ռադիկ Մարտիրոսյանը, ով Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին

այն հոգատարության համար, որ ցուցաբերվում է Արցախի նկատմամբ: Տիար Մարտիրոսյանն այս օրը նշանակալի նկատեց Հայ Եկեղեցու, հոգևորականության և մտավորականության համար:

Վերջում ներկաներին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր շնորհակալությունը հայտնեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին՝ շնորհված պետական բարձր պարգևի համար: «*Մենք այս պարգևն ընդունում ենք սիրով, հպարտությամբ և նաև հուզումով, որովհետև այն իր մեջ խորհրդանշական ձևով ամբողջացնում և կրում է հայ ժողովրդի՝ հանուն Արցախի մղած ազատագրական պայքարի ողջ ընթացքը: ...Այս շքանշանը թանկ ու նվիրական է մեզ համար, որովհետև այն նաև կերտված է Հայրենիքում և ի սփյուռս աշխարհի ապրող մեր ողջ ժողովրդի համատեղ ջանքերի և հանձնառու զոհողությունների արդյունքում: Այս բարձր պարգևը մենք ընդունում ենք նաև որպես Արցախի իշխանությունների և ողջ ժողովրդի սիրո, հարգանքի ու գնահատանքի դրսևորում հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և մեր Եկեղեցու իրականացրած առաքելությունը ինչպես պատմության ընթացքին, այնպես էլ արցախյան ազատագրական պայքարի տարիներին*»,- ասաց Վեհափառն իր խոսքում:

Հանդիսությունը փակվեց «Պահպանիչ» աղոթքով և Հայրապետական մաղթերգով:

Արցախի բարձրագույն շքանշանը համալրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախկինում շնորհված բազում պետական և հասարակական պարգևների շարքը, որոնց թվում են Հորդանանի բարձրագույն «Բեթղեհեմ-2000» շքանշանը, «Ռումինիայի աստղ» Ռումինիայի ազգային բարձրագույն պարգևը (2000 թ.), Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» շքանշանը (2001 թ.), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի կոմանդորի շքանշանը (2001 թ.), Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգև՝ Ս. Անդրեաս Նախակոչ առաքյալի շքանշանը (2004 թ.), «Դարի բարեգործներ» միջազգային բարեգործական հիմնադրամի «Սուտակե խաչ» շքանշանը (2005 թ.), ՌԴ հասարակական բարձրագույն պարգև՝ «Ռուսաստանի հպարտություն» ոսկե շքանշանը (2006 թ.), Ռուսաստանի Դաշնության «Ժողովուրդների բարեկամության» շքանշանը (2006 թ.):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԸ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ ՄԱՅԻՍԻ 28-Ի ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ